



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

ՀՀ Կոտայքի մարզ, ք. Արովյան, Բարեկամության հր.-1, 2201, հեռ. (0222) 2-03-65, (060) 447-000, էլ. h.wugb.abovyan.kotayq@mta.gov.am

24-ը ապրիլի 2023թ.

Արովյան համայնքի ղեկավար Էդուարդ Բաբայանի ուղերձը Հայոց
ցեղասպանության 108-րդ տարելիցի առիթով

Հայ ժողովրդի պատմության մեջ ճակատագրական ու ողբերգական էր 20-րդ դարասկիզբը: Մեծաթիվ հայերի կյանքի ուղին բեկվեց, ընդհատվեց թուրքական ցեղասպան քաղաքականության հետևանքով. հայության մի ստվար հատված բռնի տեղահանվեց՝ անցնելով գաղթի դժվարին ճանապարհ, միլիոնավոր հայեր զոհվեցին նախապես ծրագրված ջարդերի հետևանքով:

Մեր կողքին, մեծապես սփյուռքում, այսօր ապրում են Հայոց ցեղասպանությունը վերապրած միլիոնավոր հայեր, որոնց կորստի ցավը չի մարել, հայ ժողովրդի կյանքում այսօր էլ զգացվում են Մեծ եղեռնի աղետալի հետքերը: 108 տարի անց էլ հայը չի մոռացել իր բնօրրանը, արմատներն ու պատմությունը, ուստի հանուն պատմական արդարության և մեր արժանապատիվ ապագայի մենք պարտավոր ենք հիշել ու պահանջել ոճրագործության ընդունումն ու հատուցումը:

108 տարի անց թուրքի ձեռագիրը չի փոխվել, նրա հիմնական նպատակն ու երազանքը շարունակում է մնալ նույնը՝ հայության բնաջնջումն ու հայրենազրկումը: Ուստի կոչ են անում բոլորիս, այսօր, առավել քան երբևէ, լինել համախմբված, նկատել թշնամու ոճրագործ ծրագրերը նաև մեր օրերում և գիտակցել, որ հայի դարավոր թշնամու հետ խոսելու միակ եղանակը ուժն ու հակահարվածն է:

Մենք այսօր ոգեկոչում և խնկարկում ենք Հայոց ցեղասպանության անմեղ զոհերի հիշատակը, որը ոչ միայն անմեղ զոհերին ուղղված հարգանք և խոնարհում է, այլև հաստատական պայքար հանուն պատմական արդարության վերականգնման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Է. ԲԱԲԱՅԱՆ